Ալիբէգեան, Թումայեան, Բաշկերեան, իշխանուհի Ուխտոմսկին, Թաղիեան, Նոբել, Խանդարեան, Նելլիս։

Կայսերական ուղեկցութիւնը կայարանից բաց կառքով, կայարանի հանդէպ շինած յաղթական կամարով անցած ամբողջ գնացքի ժամանակ, անընդհատ և հանդիսաւոր «ուրան» թնդիւններով ուղեւորուեց դէպի եկեղեցին։

Նորին Կայսերական Մեծութեան օգոստափառ ընտանիքի հետ միասին եկեղեցւոյ գաւթում դիմաւորուեց Վրաստանի էքզարխը մատուցանելով ուղղափառաց կողմից մի պատկեր՝ ողջունեց Նոցին Մեծութեանց հետեւեալ ճառով՝

«Փառաբանուած Մեծ թագաւոր Կայսր, գալուստդ բարի, ամենողորմած և ամենասիրելի մեր Հայր։ Այս քաղաքը առաջուց մութ և խաւար էր. իսկ այժմ պայծառ և լուսաւոր, որովհետեւ որտեղ որ քրիստոնէական լոյսն է, այնտեղ էլ ճշմարիտ քաղաքացիական լոյսը, այն տեղ թագաւորում է ճշմարտութիւնը։ Քո ողորմածագոյն այցելութեամբ այս հեռու ընկած անկիւնը լայնածաւալ տէրութեանդ, պարգեւում ես քաղաքի բնակիչներին բաղդաւորութիւն. այս քաղաքը առաջի անդամն է, որ արժանացել է բաղդաւորութեան դիմաւորելու Ինքնակալ, ուղղափառ Թագաւորին, ողորմածագոյն թագուհւոյն և թագաժառանգին։ Բոլորիս սրտները և աչքերը դէպի Ձեզ են ուղղած, որ կարողանան լիանալ Ձեր թագաւորական բարիքներից։ Քո Ինքնակալութիւնը թող փառաբանուի և օրհնուի Մեծ թագաւոր, Ամենաբարձրեալ Աստուծով. թող կառավարուի իմաստութեամբ և ճշմարտութեամբ և ամուր պահուի թշնամիներից և առատ լինի բոլոր բաղդաւորութեան միջոցներով և Քո գահի հովանաւորութեան տակ խաղաղութեամբ ապրինք, Աստուծոյ աչքը Քեզ պահպանի ինչպէս աչքի լոյսը. ողորմած Կայսրուհուն և բոլոր թագաւորական տունը հայրենեաց փառքի և բաղդաւորութեան համար. Տէր Փրկիչը միշտ պահպան լինի Ձեր ճանապարհներին այժմ և միշտ, ամէն»։

Սովորական մաղթանքից յետոյ Ինքնակալ հիւրերը ուղեւորուեցան դէպի պալատը, որի մի կողմից ճանապարհին շա-